

Արձանագրություն հ. 3

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
07.06.17 թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 25-ը:

Օրակարգում՝

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում
2. Պրոֆեսորի գիտական կոչում ստանալու երաշխավորություն:
3. Ընթացիկ հարցեր:

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները, ովքեր ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող ամբիոնների առակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին ամբիոնների որոշումները:

Որոշեցին հաստատել ամբիոնների որոշումները առակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման վերաբերյալ (քաղվածքներն ուղարկվում են ասպիրանտուրայի բաժին):

Երկրորդ հարցը վերաբերվում էր պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար երաշխավորություն տալուն: Հավակնորդի անձնական տվյալների և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի որոշման մասին զեկուցեց մրցութային հանձնաժողովի նախագահ Հ.Մնացականյանը: Նա ասաց, որ մրցութային հանձնաժողովը երաշխավորում է Գ.Գալստյանին մասնակցելու գիտխորհրդի քննարկմանը:

Որոշեցին պրոֆեսորի գիտական կոչում ստանալու հավակնորդ Գ.Գալստյանին թույլատրել մասնակցելու փակ, գաղտնի քվեարկությանը:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ա.Ներսիսյան /նախագահ/, Գ.Բարխուդարյան, Ռ.Ալավերդյան,

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը քվեարկության արդյունքների վերաբերյալ: Դրանք հետևյալն են. քվեարկությանը մասնակցել են գիտական խորհրդի 36 անդամներից նիստին ներկա գտնվող 25-ը. կողմ՝ 25, դեմ չկա, անվավեր քվեաթերթ չկա

Որոշեցին հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը քվեարկության արդյունքների մասին:

Որոշեցին նկատի ունենալով քվեարկության արդյունքները, ամբիոնների և մրցութային հանձնաժողովի որոշումները, պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար դիմած Գ.Գալստյանին երաշխավորել ԵՊՀ գիտական խորհրդի քննարկմանը:

